# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**27 փետրվարի 2020 թվականի N 81-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 128-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի փետրվարի 13-ի N 146-Ն որոշումը՝

**ո ր ո շ ու մ եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2019 թվականի դեկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի հաստիքացուցակը և աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2018 թվականի հունիսի 19-ի N 58-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 128-Ա որոշման N 1 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

N 1 հավելվածից (հաստիքացուցակից) հանել «Ներքին աուդիտի բաժին» բաժինը, ներառյալ 1-5-րդ կետերը՝

1. Բաժնի պետ
2. Գլխավոր մասնագետ
3. Գլխավոր մասնագետ
4. Գլխավոր մասնագետ
5. Գլխավոր մասնագետ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի մարտի 1-ից:

27 02.2020

X

ՀՈՒՆԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: POGHOSYAN HUNAN 4005640117

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ** **Հ. ՊՈՂՈՍՅԱՆ**

2020թ. հունվարի 14
ք. Կապան